# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒԼԻՍԻ 2020 թվականի N 217-Ա

### ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշումով, հիմք ընդունելով Արման Արծրունի Ղաղբաշյանի լիազորված անձ Արծրուն Աշոտի Ղաղբաշյանի դիմումը, սեփականության իրավունքի N 15032013-06-0339 վկայականը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը *որոշում եմ՝*

Արման Արծրունի Ղաղբաշյանին սեփականության իրավունքով պատկանող՝ համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Երևանյան խճուղի, N 67 հասցեում գտնվող այգետնակին, վերահասցեավորման նպատակով, տրամադրել համայնք Ալավերդի, քաղաք Ալավերդի, Երևանյան խճուղի, N 67/1 փոստային հասցե:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

2020թ. հուլիսի 17
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 ՀՈՒԼԻՍԻ 2020 թվականի N 218-Ա

### ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 25.06.2020 Թ.N 161-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

Ալավերդի համայնքի ղեկավարի 25.06.2020թ. «Սեփականության իրավունքով պատկանող հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը, ամառային խոհանոցը, ջրավազանը օրինականացնելու մասին» N 161-Ա որոշման 1-ին կետում «2010» թվերի փոխարեն կարդալ «2018» թվերը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. հուլիսի 17
ք. Ալավերդի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Ալավերդի, (0253) 2-41-00, alaverdi.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՀՈՒԼԻՍԻ 2020 թվականի N 219-Ա

### ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով և 118-րդ հոդվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից տրամադրված 18.05.2020թ. N 7/ՍՄ-274 տեղեկանքն ու դիմումը, քաղաքաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջարկությունը ***որոշում եմ՝***

1. Վերականգնել Լոռու մարզ, գյուղ Ծաղկաշատ, փողոց 3, N 12/1 հասցեում գտնվող «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության ամբուլատորիայի (ծածկագիր՝ 06-050-0012-0003), կառուցման և սպասարկման համար զբաղեցրած 0.00591 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասի հողհատկացման հիմքերը:
2. Լոռու մարզ, գյուղ Ծաղկաշատ, փողոց 3, N 12/1 հասցեում գտնվող «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության ամբուլատորիայի (ծածկագիր՝ 06-050-0012-0003), կառուցման և սպասարկման համար զբաղեցրած 0.00591 հա մակերեսով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասը՝ վարձակալության իրավունքով, 25 տարի ժամանակով, տարեկան 2000 (երկու հազար) դրամ արժեքով, տրամադրել «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը:
3. Անշարժ գույքի զբաղեցրած հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍԱՍՈՒՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ**

2020թ. հուլիսի 17
ք. Ալավերդի